№ 166 Սեպտեմբերի 20 (Հոկտեմբերի 2) 1880 Սեպտեմբերի 20 (Հոկտեմբերի 2) № 166

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Ստարաքաղաքացիք գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10–2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտ տարութիւն ընդունվում է ամէն ցերեկ:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՌԱՂԱՌԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Քաղաքական մտածմունքներ: Նոր քրէական տեսութիւն: Նամակ Բագրից: Նամակ Ղարաքիլիսից: Ներքին լուրեր:— Արտաքին տեսութիւն: «Ռոսսոյ» լրագրի թղթակցութիւնը: Հայկական գործեր: Թիւրքիա: Ֆրանսիա: Նամակ Թիւրքիայից: Նամակ Պարսկաստանից:— «Մշակի» փառագիրներ: – Յայտարարութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Նորերումս մեզ աջողվեցաւ կարդալ Կ. Պոլսի մէջ հիմնված պաշտօնական «L' Osmanli» Ֆրանսերէն լրագրի յօդուածը Թիւրքաց հայերի մասին: Այդ լրագիրը որ իբր թէ խմբագրվում է ուսումնական Թիւրքերով, մեծ վտանգ է տեսնում Թիւրքաց հայերի ազգային զարգացման մէջ: Լրագիրը սաստիկ դժվում է քիւրդերին, հաւատացնում է որ քիւրդերը ամենևին արիւնարբու, վայրենի և հարստահարող ցեղ չեն և աւելացնում է որ հայերը յանցաւոր դիտաւորութիւն ունեն տարածել քրիստոնէութիւնը քիւրդերի մէջ և գրաւել քիւրդ զաւակներին դէպի հայոց դպրոցները:

Ռօլգարները, ասում է լրագիրը, թէև ապստամբվում էին Թիւրքերի դէմ և սպանում էին Թիւրքերին, բայց հայերը նրանցից վտանգաւոր են, որովհետև կուլտուրական ճանապարհով կամենում են կլանել քիւրդերին:

Ռօլգարները մարդիկ էին ըսպանում, ասում է Թիւրքաց պաշտօնական Թերթը, իսկ հայերը կամենում են փրկել բիւրդերին նրանցից քրիստոնեաները և հայեր դարձնելով: Ուրեմն, աւելացնում է Թերթը, քիւրդերի կամքի դէմ հայերը կամենում են նրանց քաղաքակրթել:

Ուրեմն որտեղ է հասել Թիւրքաց պաշտօնական մամուլը, որ այժմ հայերից էլ վախենալ է սկսում, որպէս մի վտանգաւոր կլանող տարրից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

13 սեպտեմբերի

Հասարակական կեանքը Բագուի մէջ այժմ գտնվում է կատարեալ թմրութեան մէջ: Այդ տխուր երևոյթի պատճառը պէտք է վերաբերել մեր երիտասարդութեան դէպի հասարակական շահերը ուղեցած անտարբերութիւնը: Շատ պարզ և հասկանալի է, որ մի ժողովրդի, մի հասարակութեան կեանքին այսպէս թէ այնպէս, լաւ կամ վատ ուղղութիւն տալը գլխաւորապէս կախված է նորա երիտասարդութիւնից: Եթէ նորա այդ թարմ ոյժը, այդ կենդանի տարրը որքան և իցէ կարողանում է ճանաչել և կստանել իր պարտականութիւնները հասարակական բարօրութեան վերաբերութիւնամբ, այն ժամանակ գուցէ ժողովուրդը կարող կը լինի պարծենալ, որ նա հասել է զարգացման մի որոշ աստիճանի: Բայց ինչ աստիճանի կարող եմ դասել մեր ժողովրդի զարգացումը, որի երիտասարդութիւնը, կուրացած անձնական շահերի անողնաշ զգացմունքներով, ընկած տգիտութեան և անբարոյականութեան մէջ, ներկայացնում է մի փչացած սերունդ: Ինչ ապագայ կարելի է նախապատշաճել այն հասարակութեան համար, որի որդիքը նոյն իսկ մանկական հասակից շաղախվելով վարակիչ ախտերով, օրըստօրէ մահանում են բարոյապէս: Շատ հասկանալի է, որ այդ տեսակ հասարակութիւնը երբէք չէ կարող սպասել մի նախանձելի ապագայի: Ահա այդ դրութեան մէջ է գտնվում Բագուի հասարակութիւնը, երբ մի կողմնակի հայեացք ենք ձգում այն կրտսարեր ուղղութեան վրա, որին կուրացած հետևում է նոր սերունդը:

Դեռ երիտասարդ հասակում հայ վաճառականը, թողնելով իր հայրենի երկիրը և հեռանալով դէպի Ռուսաստանի զանազան քաղաքները, սկսում է շռայլել և ծախսել իր ձեռքի փողերը անբարոյական զուարճութիւնների մէջ, և գրանով սպառում է թէ իր նիւթական և թէ ֆիզիկական ուժերը: Նա դառնում է իր հայրենիքը դեղնած, մաշված, տարբեր տարեկան ծերունու քայքայված կազմուածքով: Նա չէ բաւականանում նրանով, որ սպառել է իր կեանքը, շուտով ամուսնանում է և գրանով խառնեցնում է մի ուրիշ անբաղդ էակի կեանքը, որին վիճակվում է համբերութեամբ մինչև մահ տանջվել անտանելի ամուսնի հետ: Այդ մի բարբարական մարդասպանութիւն է, որի վրա մտածելու ժամանակ մարդ սարսափում է: Ես կամենում եմ մի քանի խօսք ևս ասել այն պարոնների մասին, որոնք իրանց աշխատում են հեռու պահել հասարակութիւնից, սրանք լուսաւորված կոչված երիտասարդներն են: Բայց կարելի է պնդանալ սրանցից որ և իցէ օգուտ, մինչդեռ գրանք անմասնանալի են հասարակ մահկանացուներին, մինչդեռ զորանց և հասարակութեան մէջ կայ մի ֆիզիկական պատ: Հարկաւոր է շատ մտրիկ ծանօթ լինել այդ ֆանֆարոնների հետ և հասկանալ, թէ ոչքան դաժանկոտութիւն, որքան անմիտ ինքնասիրութիւն է տիրում սրանց մէջ: Ազգային գաղափարը սրանց համար ոչինչ նշանակութիւն չունի, սրանք միայն անձնական շահի գաղափարով են հետաքրքրված: Այդ է պատճառը որ սրանք նոյնպէս հասարակութեան համար անօգուտ են հանդիսանում:

Մեր ամբոխի ամենավատ և մրնգամայն վնասակար սովորութիւններից մէկն էլ անշուշտ պէտք է համարել նրա ուերօգական շռայլ մտքային հետևանքը: Բագուի ոչ մի ազգարնակութեան մէջ արտաքին անմիտ պճնասիրութիւնը այնքան զարգացած չէ, որքան հայ ազգարնակութեան մէջ, մանաւանդ նրա իգական սեռի մէջ: Այդ շատ բնական է այն ժողովրդի վերաբերութեամբ, որը դեռ չէ կարողանում ըմբռնել այն ամենահասարակ միտքը, թէ լուսաւորութիւնը չէ պարունակվում լոկ արտաքին ձևերի փոփոխութեան մէջ: Հայ օրիորդի, հայ երիտասարդի ուշադրութիւնը ոչ մի բան, ոչ մի առարկայ այնքան շուտ չէ գրաւում, որքան մի նոր տեսակի հագուստն է գրաւում: Հէնց որ մէկի վրա տեսնում են հագուստի մի նոր ձև, բոլորն էլ թէ հարուստ թէ աղքատ, միմար ոչխարների նման, կը շտապեն հետևել նրա օրինակին, չը նայելով իրանց կարողութեան չափի վրա: Այդ տխուր իրողութեան մէջ առաւել հաստատ համոզվելու համար բաւական է մտնել կիրակի կամ տօն օրերը մեր եկեղեցիները և ուշադրութիւն դարձնել, առ հասարակ, հանդիսականների և մասնաւորապէս կանանց զգաստարգի վրա:

Թիֆլիսում հայ աղջկայ մտքամտութիւնը այն տեղն է հասցնում նրան, որ նա սկսում է հետզհետէ մոռանալ իր անային գործերը, իր ընտանեկան պարտականքը, ուսումնարանի կրթութիւնը և գիշեր ցերեկ զբաղվել «Русскій Базаръ», «Модный свѣтъ» և այն տեսակ նման շռայլութիւնն տարածող օրագիրներ թերթելով: Աղջկայ մէջ այդ վնասակար ձգտողութեան զարգանալուն մեծ մասամբ նպաստում են նրա ծնողները, որոնք իր նոր զաւակների մանկական հասակից սկսում են մի առանձին ուշադրութիւն դարձնել նրանց արտաքին զարդարանքի վրա, մի և նոյն ժամանակ անուշադիր թողնելով նրանց մտաւոր և հոգեկան կրթութիւնը: Ես հաւատացած եմ, որ այսպիսով հայ ծնողները վատ ներգործութիւն են անում իրանց զաւակների կրթութեան վրա. նոքա ծնեցնում են երեխայի մէջ նեղ անձնասիրութեան զգացմունքը, որը ապագայում զարգանալով նրա մէջ, սպանում է ուրիշ ազնիւ ձգտումներին: Երեխան (աղջիկը ծնած օրից, ծնողները աշխատում են որքան կարելի է ամուր լծցնել նրա համար նշանակված ասպարէզը զարդարանքներով: Թեև շատ անգամ պապահել է տեսնել այնպիսի ընտանիքներ, որոնք իրանց երկու երեք տարեկան աղջկայ համար պատրաստում են 10–15 տարեկանի հագուստներ: Հարցնում եմ թէ ինչու համար են նորա այդ անում. պատասխանում են, «ինչու ես ասենմ, երբ Փամբուխչանցի կամ Պետրոսեանցի տանը անում են»: Այդ տեսակ վարմունքը ինչին վերաբերենք, արդեօք հայի կապիտալութեանը, թէ յիմար նախանձին:—Ես կարծում եմ, որ երկուսին էլ: Բայց թէ Փամբուխչանցը կամ Պետրոսեանցը իրանց աշխատանքի մի մասը ես գնում են գաւակների մրտաւոր կրթութեան վրա,—այդ միտների համար ոչինչ նշանակութիւն չունի: Վերջացնելով նամակս, միւս անգամ կաշխատեմ մի քանի խօսք ասել նա և արական սեռի մասին, որը գուցէ կանանցից շատ յետ չէ մնացել շռայլութեան մէջ,

Ա. Մովսէսեան

ՆԱՄԱԿ ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

—

12 սեպտեմբերի

Կառավարութիւնից հրամայված է, որ մինչև հոկտեմբերի 10-ը Երևանի նահանգի գիւղերում նոր տանուտէրներ ընտրվեն: Ի հարկէ, այս կարգադրութիւնը ամենևին մեծնաստ չէ այն տանուտէրներին, որոնք իրանց կոպիտ վարմունքով և անխիղճ հարստահարութեամբ զզուեցրած էին հասարակութիւնը, այլ ևս ընտրվելու յոյս չունեն: Այս տեսակ տանուտէրները ժողովրդի արիւնը ծծող անկուշտ տզրուններ են, որոնք բացի ժողովրդին կողոպտելուց ուրիշ օգուտ չունեն:

Շատերը այդ պաշտօնի մէջ մտնելու համար ինչ տեսակ կեղտոտութիւններ ասես, որ չեն անում. ում ձեռքը հարմարելու է, ոտքին են համբուրում. ում պատվել է հարկաւոր, ոչինչ չեն խնայում. ում կաշառք է հարկաւոր, ելներեն են ծախում, չոր. ասողին ջուն են ասում: Ամեն մի գրբրացու խնդիրը ամենայն ուրախութեամբ կատարում: Ամենքին սիրելի բարեկամ են ձևանում... մի խօսքով մինչև ընտրութեան օրը այս պաշտօնի վրա սիրաշրված մարդիկը դառնում են հասարակութեան գերին, մտքը, երեխան.... Իսկ երբ ընտրութիւնը վերջանում է, և այս տեսակ ցածրահոգի մարդկերանց տանուտէրութիւնը հաստատվում է, այն ժամանակը երկկոյս գառը՝ այսօր գայլ է դառնում և կեղեքում է իրան հանդիպողներին... ում երկու բաժակ թէյ էր խմացրել, ներքնից տանն է գալս թերամ. ում մի շալի էր տուել, նրանից բուրլիներ է պլոկում... և այսպիսով բոլորից իր ծախսն ու վնասը հանում: Վայ նրանց, որոնք ընտրութեան ժամանակ մի քիչ ուշ են հասանայեն: Ահա, այսպիսի տանուտէրները դառնում են ժողովրդի հոգէառն և իրանց ուզածի պէս պտրտեցնում են տզլա և աղքատ ամբոխին: Այդ տեսակ տանուտէրներից մէկը գիցուք իր ժողովրդի մէկի հետ անձնական հաշիւ ունի, նրէ գործը յօգուտ իր չէ վերջանում, նա ամեն տեսակ կեղտոտ միջոց գործ էր դնէ և իր վրէժը նրանից կառնէ: Ճանտուտէրը ասեց մահմուդը սև է, հասարակութիւնը պէտք է կրկնէ «Այո, հրամանք ես, սև է:» Վայ նրան, որ հակառակվից. իսկոյն հասարակական վնասը կը կնրէ տանտուտէրը թէ «Փշան մարդը շատ խառնակիչ և խռովարար մարդ է, չէնը ուզում մեր գիւղը միայ»...: Մի շնծու կնդամ էլ վրէն կը դնեն և հասարակութեան բռնի ստորագրել կը տան: Հէնց բուլիից յետոյ այդ ճշմարտասէր մարդը, մի բան էլ փշի տակը՝ կը ներկայանայ տանտուտէրին և կասէ՝ «Ուզայ Աստուծոյ, ազայ, մահմեդը ոչ մարդն սև է, այլ սեւազոյն է, բոլորովին սև գոմրան է:» Մարդ կայ տարին 20 անգամ կու է քաշում, մարդ կայ մի անգամ էլ չէ: Մարդ կայ ինչպէս ասեր ուզենայ կը շինէ, պատերը ազատ ասա և այն կողմից կը դնէ, մարդ էլ կայ որ չէնց քաշը ձեռն առաս մի ախտա շինեսա, խկոյն տանտուտէրը վրա կը չանդի կամ բոլորովին կը խափանի և կամ այնպէս կը սաչմանափակի, որ խեղճի շինութիւնը կը գտնեայ մի կոպէկի: Օրինակները շատ շատ են:

Աչա, այս բոլոր հանգամանքները աչքի առաջ ունենալով, երկու բարեկամական խօսքով գառնում եմ դէպի մեր հասարակութիւնը: Պէտք է Թողնել կլերը, նասիպոնութիւնը և տանտուտէրի տարցը առանց կրքի վճռել: Պէտք է Թողնել այն ձեր, որ Մարկոսը իր քեռուն է ուզում, իսկ Կիրակոսը իր խեմմուն. պէտք է Թողնել անձնական մանր մունր հաշիւները և ընտրել այնպիսի մի մարդ, որ բարեիրէն լինի:

Գիւղերի մէջ լաւ տանտուտէրը մեծ նշանակութիւն ունի. գիւղի գլխավորները տանտուտէրն է: Եթէ տանտուտէրը տգէտ և անտարբեր է, կամ անբարոյական է, էլ այն հասարակութեան մէջից խռովութիւնը անպակաս կը լինի: Երանի այն գիւղի հասարակութեան, որի քեհխվէն և քահանան լաւ են:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են ուղղել մի սխալ. «Մշակի» № 154-ում Արագածից գրված նամակի մէջ ասված էր, թէ «գաւառապետը իր ձիաբոյներով երկար որոնելուց յետոյ, քարերի կոյտերի մէջից գտաւ Քալբալայ Աղիզի կողոպտած սպրանքները»: Այդ սպրանքները ոչ թէ գտաւառապետն է գտել, այլ նրա առաջին օգնական պ. Վաղարշակ Շահխաթունեանցը, որի նման կարգապահ և արթուն պոլիցիական դեռ չէ եղել Ալեքսանդրապոլում:

—

ԶԱՐԱԳԻԼԻՍԱՑԻՑ գրում են. Քալբալայ-Աղիզ աւազակապետի սպանվելը ընդհանուր ուրախութիւն պատճառեց այդ կողմերում. ժողովուրդը փառք է տալիս Աստուծուն, որ ազատվեցաւ այդ բարբարոսից:

—

ՀԱՄՋԱՋԻՄԱՆԻՑ գրում են. տեղային հայոց գաղութի վարժապետը իր օձիկը չը ստանալով, գանգատվեց հոգաբարձութեան մօտ Ղարաբիլիսայի հաշտարար դատաւորի մօտ: Դատարանը